

ՆԱԽԱԿ ԱՂԵՔԱՆԳՐԱՊՈՒՆ

... Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ.

Քաջայայտ է ամենեցուն, թէ որքան օգտուէտ է ամենակարեւոր իրողութիւն ազգային լրագրաց միջոցաւ իւր ընդհանուր ազգայնոց տարփողել տեղեկութիւններ, որոնք վերաբերում են ազգային յառաջդիմութեան նոցա մատաղահաս մանկանց մտաւոր եւ բարոյական կրթութեան նկատմամբ, մանաւանդ թէ քաւական նշանաւոր են յիշատակեալ տեղեկութիւններ որպիսի է հետեւեալ բարեպատար եւ ազգօգուտ տեղեկութիւնն, զոր մեծ ուրախութիւն եւ քաղցր պարտականութիւն եմ համարում աւետել սիրելի ազգայնոցս պատուական «Արարատ» ամսագրաւ, աներկբայ լինելով, որ պատրաստ է դա, սոյն օրինակ ազգապարծանք ամենացանկալի տեղեկութիւններն, սիրալիր մեծարանօք հիւրընկալելու իւր լուսաւաղիկ եւ քաղցրաբարոյ դալարումը:

Արդարեւ չքնաղ գշտոյն առաքինութեանց ծշմարիտ եւ ջերմ Աստուածսիրութիւնն երբ հաստատ զահակալում է մարդկային սրտից մէջ եւ կառավար է հանդիսանում նոցա այլ ամենայն զոյցմանց, մեծամեծ Աստուածահաճոյ եւ ազգաշահ բարեգործութեանց պտուղներ է ծնանում. պտուղներ, որոց ծաշակումը քաղցր է եւ անմահաբար եւս եւ զուարթացուցիչ մտաց եւ սրտից. սոյնպիսի ջերմ աստուածսիրական եւ ազգասիրական առաքինութիւններ անկողոպտելի եւ հոգեպանայն զարդով Երկայնաբազուկ Արդութեան իշխանալն եւ պայծառափայլ տոհմի զարգարուած լինելն ի վաղուց ստուգախօս պատմագրութեանց էջերումն զրօշմուած կայ օրհնութեանց անմահ յիշատակներով. իսկ այժմ ահա այդ առաքինափայլ եւ մեծանուն ազգատոհմի մի բարեժառանգ Շառախղն եւս իւր արժանայիշատակ վիճ նախնեաց պանծալի առաքինագործութեանց հանդիսովն ներկայանում է այժմեան Հայ ազգութեան, եւ նախանձելի Աստուածապաշտութեան եւ ազգասիրութեան ծշրբիտ օրինակներ պատկերացնելով նոցա առաջին, հրաւիրում է իւր համաստիճան ազգայնոց ղէպ ի նոյն սխրալի առաքինագործութեանց երկնատար եւ լուսափայլ շաւիղը:

Ո՞վ է այդ առաքինագործ անձը, — մօտ միջոցիս առ տէր հանդուցեալ պայծառափայլ կնեաղ Ղահրաման Երկայնաբազուկ Արդութեանցը, որ քանի տարով առաջ, երբ մեր Աղէքսանդրապոլ բաղմահայ քաղաքը պատահում է իր անձնական գործով, ազգասիրական

հոգեով վառուած տեղւոյս աղքատաց եւ եկեղեցեաց զանազան առձեռն նուիրաբաշխութիւններ անելուց յետոյ, զգալով եւ այստեղի ազգայնոց ազգաշահ օժանդակութեանց կարօտութիւնը, եւ միանգամայն մէկ առանձին սէր եւ համակրութիւն ցոյց տալով սոցա, յղացեալ էր իւր հայրենասէր եւ բարեխոհ սրտի մէջ, որ իրեւ յիշատակ իւր ժառանգական Աստուածապաշտութեան եւ ազգասիրութեան, երկու հոյակապ արձաններ կանգնէ քաղաքիս մէջ. ուստի եւ այդ առաքինական խորհուրդը իրագործելու համար 1858 թուին նուիրէ 3800 մանէթ արծաթ քաղաքիս մէջ մէկ եկեղեցի կառուցանելու նպատակաւ, որպիսի եկեղեցին թէ նոյն փողով եւ թէ տեղւոյս բարեպաշտօն հայազգի ժողովրդոց ձեռնտուութեամբ կառուցանվում է. քայց ունենալով դեռեւս քաւականին թերութիւններ, յիշատակեալ լուսահոգի հանդուցեալը որպէս նախապատճառ եւ պիտաւոր նուիրատու այդ եկեղեցւոյ կառուցմանը, բարեհաճել է հաստատուն կտակաւ նուիրել այժմ եւս 2200 ռուբլի արծաթ զոյն եկեղեցւոյ թերութիւններն լրացնելու դիտմամբ. եւ 40.000 ռուբլի եւս կտակել է այն նորակառուց եկեղեցւոյ շրջապատումն, կամ այլ յարմարաւոր տեղում քաղաքիս մէջ Հայ Օրիորդաց Ուսումնարան բանալու համար. ինչպէս որ զբաւոր հաւաստի տեղեկութիւնից երեւում է, ստացել է ազնուամեծար Ալիական աղայն Գորոյեանց այդ Աստուածահաճոյ կտակն որտեղից որ արժանն է. արդէն հաստատուած է եւ շուտով պէտք է կատարումն առնի վասն զի կտակաւատար կարգուած են ղլխաւորապէս առաքինահոգի հանդուցելոյն բարեպաշտ իշխանուհի ամուսինը, եւ երկրորդապէս պայծառափայլ իշխանալն եւ հարազատ եղբայրը, եւս եւ ազնուամեծար փեսայն, որոնք միեւնոյն առաքինական հոգեով վառուած լինելով, ի հարկէ իւրեանց առ Քրիստոս հանդուցեալ սիրելի հարազատի բարեփափագ իղձը շուտափոյթ պսակելու համար պիտի ջանան եւ աշխատեն ամենայն եռանդեամբ. որով եւ նորա բարեհոյակ անուան քաղցր յիշատակի հետ իւրեանց առաքինագործութեանց յիշատակներն եւս կանմահացնեն զաստիարակելի հայ օրիորդաց եւ քաղաքիս բոլոր Հայոց երախտազգաց սրտից մէջ յաւերժական օրհնութեամբ, ուստի եւ յուսալի է թէ քիչ օրից յետոյ կտակի իսկական պարունակութիւնը ազգային լրագրաց միջոցաւ կարգալու քաղղն եւս ունենանք.

Հարկաւոր եմ համարում այս տեղեկութիւնն եւս հաղորդել, թէ վերտողեալ զբաւոր եւ հաստատի տեղեկութիւնից առաջ այս ազգօգուտ կտակի մասին թէ

հեռագրով և Թէ. Մեղու Հայաստանի. լրագրի միջոցաւ լուր հասնելով քաղաքս, տեղւոյս արժանապատիւ առաջնորդական Փոխանորդը այս նոր տարեմտին առաւօտեան ըստ պատշաճի աւուրն, համառօտ տեսնախօսութեան մէջ սոյն բերկրաւէտ լուրն եւս աւետեց մեր ժողովրդեանը. որոնց մեծ ուրախութեան զղայմունք և հոգեկան բերկրանք պատճառեց. վասն զի այդ մեծագումար առատածեռնութիւնը մէկ յատուկ նախախնամական ողորմութիւն և անակնկալ յաջողութեամբ էր իւրեանց մատաղահաս օրիորդաց բարեկիրթ դաստիարակութեան և օրինաւոր մայրեր պատրաստելու վերաբերութեամբ, որին խիստ շատ զգալի կարօտութիւն ունի մեր բաղդադուրկ մայր Հայաստանը:

Պատարագից յետոյ համախումբ հոգեւորական դասով կատարուեցաւ հոգեհանդիստ. որեւ, ինչպէս լսում ենք, կարգադրուած է իւրարանչիւր տարի եւս մէկ օր կատարել պատարագաւ. վասնորոյ և ես տեղւոյս հայազգի հասարակութեան այս մասով ունեցած բերկրաւէտ ուրախութեան և երախտամեծար զղայմանց ի լուր համօրէն ազգայնոց Թարգման լիւնելուս ուրախութեամբ լցուած, մեծայոյս եմ, Թէ Արարան եւս իւր հարազատ որդւոյ այս առաքինագործութեանց վերայ ուրախանալով պիտի բարեհաճի տեղւոյս ազգայնոց հետ բարեմաղթել որպէս նոյն Կտակարար Իշխանազն հանգուցելոյ առաքինի հոգւոյ Ատուածուստ վարձատրութիւն, նոյնպէս և նորա վսեմափայլ ազգատոհմի սոյնպիսի բարեգործութեամբ և յամայր ամօք յարատեւութեան համար ի պաշտօնութիւն Սուրբ Եկեղեցւոյ և ի պիտանաւորութիւն Ազգի:

Սպասելով յիշատակեալ ուսումնարանի բացման աւետելու ամենացանկալի ժամուն, մնամ մշտապէս և եռանդալին ցանկացող սոյնպիսի հոգեուրախ և ազգօգուտ լոյս:

Մկրտիչ Վարժ. Արարաջեանց.

ՆԱՄԱԿ ԱՍՏԲԱՆԱՆԻՑ.

. Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ.

ա. Աստրախանայ հայազգի վաճառական պարոն Կարապետ Զարարեան Գալստեանց ըստ հրաւիրանոց Հոգաբարձութեանս յՏ ներկայ ամսոյ համարաւ 4, ներկայացաւ ի սոյն, և ի վճար ստորագրեալ յամին 1867, մի հազար ռուբլի գումարի ի ժապաւինեալ տումարի ի նպաստ շինութեան նորոյ տան Գարոցի սրբոյ Կատարինեայ եկեղեցւոյ քաղաքիս

ինքնայօժար կամօք մատոյց զմի Թաղաւորական բանկի հինգ տոկոսաբեր բիլէթ 1860 ամի համարաւ 103,229, գումարաւ մի հազար ռուբլի ամաթի երկամեայ տոկոսեօք (այսինքն չորերին կուպոնօք) յայտնելով զցանկութիւն իւր Թէ զմայր գումար առաջարկեալ բիլէթի նուիրէ ի մշանջնաւոր սեպհականութիւն Գարոցաց. իսկ զտոկոսին ի վերայ աճնր գումարի յամի ամի գործադրել ի պէտս պահպանութեան սոյնոյիկ:

բ. Աստրախանայ հայ աստիճանաւոր Գրիգոր Զարարեան Բուդաղեանց նուիրեաց զ45 հասար «Վիհիւմ-Յել» բանաստեղծական մատեանս Յօրեանի Թարգմանեալ ի Գաղիացւոց լեզուէ ի հայ. ի 1863 ամի ի Մոսկով ի Մովսիսէ Բուդաղեանց, գումարաւ երեսուն և մի ռուբլի յիսուն կոպէկ արծաթի:

գ. Բաքուայ հայ Անարօն - բէկ Դասարեանց նուիրեաց յօգուտ Գարոցաց զեօթն ռուբլի արծաթի:

դ. Աստրախանայ հայ Յակովբ Հայրապետեան պարոն Կրանիլչիկեանց առաջի արար ի նուէր Գարոցաց զ38 հատ հեղբէն սաղմոս, զ78 հատ այրբենարան, զ7 հատ նոր կտակարան և զմի հատ յատուկ Բառգիրք հայկական լեզուի տպեալ ի Վենետիկ, գումարաւ քառասուն ռուբլի իննսուն կոպէկ արծաթ:

Աւստի Հոգաբարձութիւնն զկնի յայտնելոյ զգոհունակութիւն իւր վերոյիշեալ անձանց վասն այսօրինակ նուիրագործութեանց, մանաւանդ առաջնոյն նշանաւոր գումարօք, շնորհ ունի խոնարհաբար խնդրել ի Խմբագրութենէ «Արարատ» ամսագրի, հրատարակել զըրամաւոր նուիրագործութենէ պարոն Կարապետի Գալստեանց և Անարօն - բէկի Դասարեանց, և զընծայաբերութենէ պարոն Բուդաղեանց և Կրանիլչիկեանց զրենօք յօգուտ Գարոցաց Աստրախանայ, ի զիտութիւն բարենախանձ անդամոց ազգի Հայոց:

Հոգաբարձուք

Աւագ Քահանայ Յովսէփ Բունիաթեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սիմէօն Պօպօվեանց
Խաչատուր Գաղաշեանց
Սարգիս Բուրջալեանց

ի 24 Մարտի 1869 ամի

ԻՐ. Աստրախան:

ՆԱՄԱԿ ՀԻՆ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

. Խմբագրութեան «Արարատ» ամսագրի.

Հրամանաւ Նորին Վեհափառութեան, Տեառն և Տեառն ԳԵՌԳԱՅ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամե-